ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

Nо 1582-Ա/2 «02 » սեպտեմբերի 2022 թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 170 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետով և 3-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Երևանի հ. 170 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանակոչել «Ալեքսանդր Քեմուրջյանի անվան Երևանի հ. 170 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1839-Ա/Ք հրամանով հաստատված «Երևանի հ. 170 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (այսուհետ՝ կանոնադրություն)՝

1) 1-ին կետում «Երևանի հ. 170 ավագ դպրոց» բառերը փոխարինել «Ալեքսանդր Քեմուրջյանի անվան Երևանի հ. 170 ավագ դպրոց» բառերով:

2) 3-րդ կետում «հիմնարկի» բառից հետո լրացնել «և «Երևանի հ. 170 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության» բառերով.

3. 7-րդ կետը շարադրել նոր խմբագրմամբ.

«7. Դպրոցի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Ալեքսանդր Քեմուրջյանի անվան Երևանի հ. 170 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ «Ալեքսանդր Քեմուրջյանի անվան Երևանի հ. 170 ավագ դպրոց» ՊՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ «Ереванская Старшая школа N 170 имени Александра Кемурджиана» государственная некомерческая организация.

4) ռուսերեն կրճատ՝ «Ереванская Старшая школа N 170 имени Александра Кемурджиана» ГНО.

5) անգլերեն լրիվ՝ «Yerevan High School N 170 Named After Alexander Kemurdzhian» State Non Profit Organization.

6) անգլերեն կրճատ՝ «Yerevan High School N 170 Named After Alexander Kemurdzhian» SNPO:»:

3. Հաստատել կանոնադրության փոփոխությունները:

4. «Երևանի հ. 170 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ կանոնադրության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ պետական գրանցման:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

X _____